

ՋՐՕՐՀՆԷՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ Ե ՅՈՒՆՈՒԱՐ:
ՇԱՐԱԿԱՆ ԴՁ.

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն, զի վերստին նորոգեցես զապականեալն Ադամ: Դու Աստուած ի յերկրի երեւցար եւ ընդ մարդկան շրջեցար, եւ փրկեցեր գտիեցերս յանիծիցն Ադամայ: Քեզ ի յերկնից վրկայեալ Հօր քննայն, ասէ դա է իմ Որդի, եւ սուրբ Հոգին զքեզ յայտնեաց աղանակերպ երեւմամբ:

Քահանան - (կայսածու ըուր կը թափէ աւագանին մէջ ըսելով):

Ասեն ձայնիւ ՍԱՂՄՈՍ ԻԸ.

ԿՑ. - Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

ՓԽ. - Մատուցէք Տեառն՝ որդիք Աստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց:

Մատուցէք Տեառն զփառս եւ զպատիւ. մատուցէք Տեառն զփառս անուան նորա. եւ երկիր պազէք Տեառն ի սրահ սրբութեան նորա:

Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Ձայն Տեառն զօրութեանց, եւ ձայն Տեառն մեծվայելչութեանց:

Ձայն Տեառն փշրէ զմայրս. եւ մանրեացէ Տէր զմայրսն Լիրանանու:

Մանրեացէ զնոսա որպէս զմատաղատունկսն Լիրանանու. որ սիրելին է որպէս զորդիս միեղջերուի:

Ձայն Տեառն հատանէ զբոց ի հրոյ. ձայն Տեառն շարժէ զանապատն. եւ խռովեցուցանէ Տէր զանապատն Կաղէս:

Ձայն Տեառն հաստատէ զեղջերուս, եւ յայտնի առնէ զանտառս:

Ի տաճարի նորա ամենեքեան ասացեն փառս նմա:

Տէր զջրհեղեղս նստուցանէ եւ ցածուցանէ. թագաւորեացէ Տէր յաւիտեան:

Տէր զօրութիւն ժողովրդեան իւրում տացէ, եւ օրհնեացէ զժողովուրդիւր ի խաղաղութիւն:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի ՉՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ Բ. 19 - 22

Եւ այդ քաղաքին մարդիկը Եղիսէին ըսին. « Այս քաղաքին բնակութիւնը բարի է, սակայն ջուրերը գէշ են եւ հողը՝ անպտուղ»: Եղիսէ անոնց ըսաւ. « Ինծի նոր կուժ մը բերէ՛ք եւ մէջը աղ դրէ՛ք: Եւ անոնք բերին: Եղիսէ ջուրերուն աղը դնաց ու հոն աղ նետելով ըսաւ. « Տէրը այսպէս կ'ըսէ. այս ջուրերը բժշկեցի. այսուհետեւ բնաւ մահ եւ անպտղութիւն պիտի չըլլայ»: Արդարեւ այդ ջուրերը այնուհետեւ լաւացան՝ Եղիսէի խօսքին համեմատ:

Reading for January 6th Solemnity of the Epiphany of our Lord Jesus Christ

According to the Armenian Rite

2 KINGS Chapter 2

19 The inhabitants of the city complained to Elisha, "The site of the city is fine indeed, as my lord can see, but the water is bad and the land sterile.

"20Elisha said, "Bring me a new bowl and put salt into it." When they had brought it to him,

21he went out to the spring and threw salt into it, saying, "Thus says the LORD: I have purified this water. Never again shall death or sterility come from it."

22And the water has stayed pure even to this day, according to the word Elisha had spoken.

ISAIAH Chapter 12

3With joy you will draw water
from the fountains of salvation,

4And you will say on that day:
give thanks to the LORD, acclaim his name;

Among the nations make known his deeds,
proclaim how exalted is his name.

5Sing praise to the LORD for he has done glorious things;
let this be known throughout all the earth.

6Shout with exultation, City of Zion,

for great in your midst
is the Holy One of Israel!

1 CORINTHIANS Chapter 10

1* I do not want you to be unaware, brothers, that our ancestors were all under the cloud and all passed through the sea,

2and all of them were baptized into Moses in the cloud and in the sea.

3All ate the same spiritual food,

4and all drank the same spiritual drink, for they drank from a spiritual rock that followed them, and the rock was the Christ.

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Ձուր առէք ուրախութեան աղբիւրներէն: Այն օրը պիտի ըսես. Օրհնեցէք Տէրը, հռչակեցէք իր անունը, պատմեցէք իր փառքը հեթանոսներուն մէջ. յիշեցէք որ իր անունը փառաւորուեցաւ: Օրհնեցէք Տիրոջ անունը, որովհետեւ մեծամեծ գործեր կատարեց. բովանդակ աշխարհ՝ պատմէ Տիրոջ սքանչելագործութիւնները: Ցնծացէք եւ ուրախացէք, ով Սիոնի բնակիչներ, որովհետեւ Իսրայէլի Աստուածը անոնց մէջ փառաւորուեցաւ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻՆ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ՈՒՂՂԱԾ Ա.

ԹՈՒՂԹԷՆ Է ԸՆԹԵՐՑՈՒԱԾՍ Ժ. 1 - 4

Ձեմ ուզեր, եղբայրներ, որ անգիտանաք թէ ինչպէս մեր հայրերը, ամէնքն ալ ամպի տակ էին, ամէնքն ալ ծովէն անցան. ամէնքն ալ ի Մովսէս մկրտուեցան՝ ամպի տակ եւ ծովուն մէջ: Ամէնքն ալ միեւնոյն հոգեւոր կերակուրը կերան, ամէնքն ալ միեւնոյն հոգեւոր ըմպելին խմեցին, որովհետեւ կը խմէին այն հոգեւոր ժայռէն որ անոնց կ'ընկերանար, եւ այդ ժայռը՝ նոյնիքն Քրիստոս էր:

ՄԻԿ. - Ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա: Ուրախ լիցին երկինք եւ ցնծացէ երկիր, զուարճացի ծով լրիւ իւրով, տիեզերք եւ ամենայն բնակեալքն ի նմա:

(Կամ ալ) - Ծով ետես եւ փախեալ, եւ Յորդանան անդրէն դարձաւ:

ՄԻԿ. - Ալէլուիա օրթի:

ՔՀՆՅ. - Խաղաղութիւն ամենեցուն:

ԴՊ. - Եւ ընդ Հոգւոյդ քում:

ՄԻԿ. - Երկիւղածութեամբ լուարուք:

ՔՀՆԵ. - Մըբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի. Գ. 13 - 17

Այն ատեն Յիսուս Գալիլիայէն Յորդանան եկաւ. Յովհաննէսի մօտ, անկէ մկրտուելու: Բայց Յովհաննէս արգիլեց զինք ըսելով. «Ես պէտք եմ քեզմէ մկրտուիլ, դուն ինձի՞ կու գաս»: Յիսուս պատասխանեց եւ անոր ըսաւ. «Թոյլ տուր հիմա, պատշաճ է մեզի որ այսպէս կատարենք ամէն արդարութիւն»: Այն ատեն Յովհաննէս թոյլ տուաւ: Երբ Յիսուս մկրտուեցաւ եւ իսկոյն ջուրէն դուրս ելաւ, ահա երկինքը իրեն բացուեցաւ եւ տեսաւ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի նման կ'իջնէր եւ իր վրայ կու գար: Եւ ահա երկնքէն ձայն մը որ կ'ըսէր. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»:

Դպիրք – Փառք քեզ Տէր Աստուած մեր:
 Սրկ – Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
 Քհն – Տէր ողորմեա:
 Սրկ – Երկնատուր խաղաղութեան եւ մեր անձերուն փրկու-
 թեան համար Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա:
 Սրկ. – Աշխարհի խաղաղութեան եւ սուրբ Եկեղեցւոյ հաստա-
 տութեան համար Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա:
 Սրկ. – Որպէսզի անոնք որ հաւատքով այս ջուրէն առնեն, ան-
 կէ օրհնութիւն ընդունին. Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա:
 Սրկ. – Որպէսզի այս ջուրը ընդունի Յորդանանի օրհնու-
 թիւնը եւ Հոգիներու եւ մարմիններու բժշկութեան ծառայէ Միա-
 ծին Որդիին շնորհքներովը որ մեզ լուսաւորեց. Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա:
 Սրկ. – Որպէսզի սուրբ Հոգին իջնէ այս ջուրին վրայ եւ վե-
 րստին կեանք պարգեւէ անոնց որ կը մկրտուին եւ կ'ըլլան լոյսի
 եւ ճշմարտութեան որդիներ, Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա:
 Սրկ. – Յիշելով Աստուածածին Մարիամ միշտ Կոյսը, Սուրբ
 Յովհաննէս Մկրտիչը եւ բոլոր Սուրբերը. անոնց միջնորդու-
 թեամբ Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Յիշէ Տէր եւ ողորմէ:
 Սրկ. – Մեր ճշմարիտ եւ սուրբ հաւատքին համար միասնաբար
 Տիրոջ աղաչենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա:
 Սրկ. – Մեր անձերը եւ զիրար յանձնենք Ամենակալ Տէր Աս-
 տուծոյ:
 Քհնյ. – Քեզի կը յանձնենք մեր անձերը, ով Տէր:
 Սրկ. – Ողորմէ մեզի, Տէր Աստուած մեր, քու մեծ ողորմու-
 թեամբդ. ամէնքս միասնաբար ըսենք:
 Քհնյ. – Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ա Ղ Օ Թ Ք

Օրհնեալ ես, Տէր Աստուած ամենակալ, Դուն որ ամէն բանի
 մէջ հզօր ես եւ սքանչելագործ, ստեղծեցիր երկինքը, երկիրը եւ
 ծովերը: Քու Հոգիդ կը շրջէր ջուրերուն վրայ: Յորդանան գետին
 մէջ, Հայրդ Քրիստոսի աստուածութիւնը յայտնելով՝ ըսաւ.
 «Ատիկա է իմ սիրելի Որդիս» եւ լուսափայլ սուրբ Հոգին՝
 աղանակերպ իջմամբ երեւցաւ: Յովհաննէս Մկրտիչը ցոյց տա-

PRAYER OF THE FAITHFUL

Deacon Let us pray the Lord of peace.

All Lord, have mercy!

Deacon To receive heavenly peace and for the salvation of our souls, let us pray.

All Lord, have mercy!

Deacon For peace in our World, and the stability of the Holy Church, let us pray.

All Lord, have mercy!

Deacon May the Lord God purify our intentions and will, as well as of the priest who will administer the Baptism, let us pray.

All Lord, have mercy!

Deacon For the collaboration of the Holy Spirit in sanctifying this water, let us pray.

All Lord, have mercy!

Deacon For this waster to receive the very blessing of the Jordan, and to serve for the cleansing of souls and the curing of bodies as well, let us pray.

All Lord, have mercy!

Deacon For the catechumen to be baptized in this Font, so that he/she may become a son/daughter of Light and of Truth, let us pray.

All Lord, have mercy!

Deacon Remembering the ever Virgin Mary, the Mother of God, St. John the Baptist and all the Saints, let us pray having confidence in their intercession.

All Remember them, Lord, and have mercy!

Deacon Let us recommend ourselves and each other to Almighty God, the Lord!

All To you, Lord, we abandon ourselves!

Deacon Have mercy, Lord our God, for your great love; let us all together say:

All Lord, have mercy! Lord, have mercy! Lord, have mercy!

լով Քրիստոսը, կ'ըսէր. «Ահա Աստուծոյ Գառնուկը՝ որ աշխարհի մեղքերը կը կրէ», ապա ամէնուն հրամայեց ջուրերուն մէջ իջնել եւ ջախջախել թշնամիին զօրութիւնները: Ամէնքը իրենց մեղքերուն աղտէն լուալով, նորափետուր զարդարեց եւ կնքեց խաչանշան դրոշմով, դարձնելու համար մէկ հօտ ու մէկ հովիւ: Իբրեւ գաւիթ ընտրեց իր սուրբ կաթողիկէ Եկեղեցին, զայն ամրացուց Մարգարէներով, զայն պարսպեց Առաքեալներով, զայն դափնեպսակեց Մարտիրոսներով, զայն զուարճացուց աւետարանական խօսքով, որպէսզի ամէնքն ալ զայն խաղաղութեամբ վայելէին:

Այսօր երկնային Զօրութիւնները անմարմին զօրքերուն հետ երկրի վրայ կը սպասաւորեն Քրիստոսի՝ մեր Աստծոյն, եւ երկնքի մէջ փառաբանութիւն կը մատուցանեն Հօր Աստուծոյ: Եկէք այսօր, Քրիստոսի հաւատացող նոր ժողովուրդներ ցնծանք եւ հրեշտակներուն հետ սուրբ եւ երկնային տօնախմբութիւններ սարքենք:

Եւ այժմ, կ'աղաչենք Քեզի, ով մարդասէր Տէր, քու սուրբ Հոգիդ դրկէ այս ջուրին վրայ եւ ՚ օրհնէ ու սրբէ զայն, ճոխացուր զայն Յորդանանի շնորհքներով, եւ զայն օրհնութեան աղբիւր դարձուր, ինչպէս նաեւ աղբիւր անապականութեան, մեղքերու լուծում, հիւանդներու բժշկութիւն, դեւերու ահագին խորտակում եւ ախտաժեւանքներու առողջութիւն:

Արդարեւ Դուն ես մեր Աստուածը, որ անապատին մէջ Մովսէսի օրով՝ անոր ձեռնափայտին միջոցաւ դառնահամ ջուրերը քաղցրացուիր: Դուն անձամբ՝ Եղիայի օրով՝ Իսրայէլը ազատեցիր հուրով ու ջուրով Բահաղի ծառայութենէն:

Այժմ ալ, ով Տէր, մեզի մօտեցիր եւ սուրբ Հոգիիդ միջոցաւ օրհնէ այս ջուրը, որպէսզի սա ըլլայ տուներու շինութեան համար, հիւանդներու բժշկութեան համար, հոգիներու եւ մարմիններու փրկութեան համար, օգտակար ըլլայ ամէն հարկաւորութեանց: Դուն ես արդարեւ մեր մարդասէր եւ ողորմած Աստուածը: Քու ծառաներուդ դէմ չարիք մտածողները թող անկէ փախչին, որպէսզի, ով Տէր, միշտ կրկնենք քու մեծ, փառաւորեալ եւ սքանչելի Անունդ ու տանք Քեզի օրհնութիւն եւ փառք Հօր եւ սուրբ Հոգիիդ հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. - (Կ'երգէ Յովհաննէս Մարմարեցիի շարադրած «Մեծ Քարոզ» ի վերայ շրջն: Մատոց էջ 527):

Յամենայն ժամ օրհնեմք զօրհնեալ Փրկիչդ էմմանուէլ, ծընար ի Կուսէն եւ վերստին ծնրնդեամբ մկրտեցար այսօր ի Յորդանան ի Յովհաննէ, յնորին/բարեխօսութեամբ ընկալ զաղաչանքոց պաշտօնէից, աղաչեմք:

Իպիրք - Լուր Տէր եւ ողորմեա:

Սրկ. — Որ սըրբեցեր ըզջուրան Յորդանանու սըրբիչդ աշխարհի, տալով ըզկնիք նորոգման որդւոց Սիովնի, տուր մաքրութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ազատութիւն քում ժողովրդեան, աղաչեմք:

Դպիրք. — Լուր Տէր եւ ողորմեա:

Սրկ. — Եւ եւս առաւել զյորդորումըն սիրոյ եւ ըզգործքս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:

Դպիրք. — Տուր մեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. — Գոչմամբ Տիրուհւոյ իսկապէս Մօր քոյ եւ Կուսի Մարիամու Աստուածածնին եւ հուպ եղելոյ քեզ հողանիւթ հրեշտակին ի Յորդանան այսօր զքեզ ձեռնադրողին, կրկին բացողին զերկինս սրբոյն Ստեփանոսի նախավրկային, եւ Հօրըն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, եւ ամենայն սրբոց քոց Տէր որք յաւիտենից քեզ հաճոյացան, աղաչեմք:

Դպիրք. — Լուր Տէր եւ ողորմեա:

Սրկ. — Զանձինս մեր եւ ըզմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրք. — Քեզ Տեառնըդ յանձն եղիցուք:

Սրկ. — Ողորմեաց մեզ Տէր Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրք. — Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Լուր Տէր եւ ողորմեա:

Քհնյ. — Խաղաղութիւն ամենեցուն:

Աստուած կենդանի եւ յաւիտենական, դուն որ ոչ ոքէ սկիզբ առնելով, նախիշխանութեամբ ամէն արարածներուն սկզբնապատճառ ըլլալով՝ ամէն բանի դոյութիւն պարգեւեցիր: Ամէն բանի ստեղծիչ Աստուած, սուրբ եւ կենդանարար Հոգիդ յայանեցիր ջուրերուն վրայ շրջելով եւ ջուրերը սրբեցիր անոնց մէջ իջնելով: Այժմ, ով Տէր, մեր Աստուածը, օրհնէ՛՛ այս ջուրերը եւ զանոնք ըրէ քու ծառաներուդ մաքրութեան համար եւ այս ջուրերէն հալածէ ամէն տեսակ վնաս, բիծ, ախտ եւ սատանայի ամէն բռնութիւն, եւ ասոր մէջ հոսեցուր քու ամենազօր Հոգիիդ շնորհները. ըրէ որ այս ջուրն ըլլայ բժշկութիւն, առողջութիւն եւ յաղթութիւն ամենաչարին զօրութեան դէմ: Եւ մենք ամէնքս ասով արժանանանք քու օգնականութեանդ, սրբութեանդ, բժշկող զօրութեանդ եւ ընդունելութեանդ, որպէսզի անդադար փառաւորենք Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգիդ այժմ եւ միշտ եւ յաւիտենանս յաւիտենից. ամէն:

(Քահանայ մը բուրվառակիրին, մոմակիրներու եւ քոցակիրներուն հետ թափօրով կը բերէ Ս. Մեռոնը արծաթէ աղանիի մը մէջ եւ ափսէի մը վրայ դրուած):

Դպք. երգեն ՅՈՐԴՈՐԱԿ ԳԿ.

Ով զարմանալի խորհուրդս այս մեծ յայտնեալ
Արարիչ Աստուած ի Յորդանան եկեալ :
Գետ մի զարհուրիք քո արարիչն եմ ես,
Եկեալ մըկըրտիմ եւ լըւանամ ըզմեզս :
Այսօր ձայնքն հայրական
Յերկնից իջեալ հանոյական
Սիրեցելոյ Որդւոյ վըկայ
Այ յորդորէ, գետ յորդորէ,
Գետ Յորդանան,
Յորդորական ձայնիւ երգէր
Մեծ Կարապետըն Յովհաննէս :

Քինյ. - Օրհնեացի † եւ սրբեացի ջուրս այս նըշանաւ սուրբ
խաչիւս եւ սուրբ Աւետարանաւս եւ սուրբ Մեռոնաւս եւ աւուրս
շնորհիւ, յանուն Հօր † եւ Որդւոյ † եւ Հոգւոյն սրբոյ †, այժմ
եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից :

Դպք. - Ամէն ալելուիա, ալելուիա, ալելուիա :

(Երեւ մեզամ կը կրկնեն «Օրհնեացի եւ սրբեացի» տաղը) :

Քինյ. - Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբ-
ոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից :

Դպք. - Ամէն :

ՇԱՐԱԿԱՆ ԴԶ

Առաքելոյ ազաւնոյ իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց,
ի նմանութիւն լուսոյ փայլման հրագիւնեաց անկիզբի զաշակերտս
մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն :

(Քահանան սուրբ Մեռոնը կաթեցնելով աւազանին մէջ՝ կ'ըսէ) :

Հեղումն մեռոնիս Տեանն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ Հոգ-
ւոյն սրբոյ մխիթարչի, եղիցի յանուն Ներորդութեան, ամէն :

(Քահանան երկաթէ խաչը կը մխրճէ ջուրին մէջ) :

Դպիրները կ'երգեն

ՇԱՐԱԿԱՆ ԴԶ.

Մըկրտի Քրիստոս եւ սրբինն ամենայն արարածք, եւ տայ
մեզ թողութիւն մեզաց, ջրով եւ Հոգւով վերասըրբելով ըզմեզ :

(Քահանան կը համրուրէ խաչը եւ զայն համրուրելի կու տայ բարձը բռնոյ փոքրիկին՝
Յիսուսի կնքաօր, եւ խաչը անոր գերկը կը դնէ) :

Սրկ. Ազնաչենք Տիրոջ, որպէսզի իր սուրբ Խաչով մեզ փրկէ մեզքերէն եւ մեզ ապրեցնէ իր ողորմութեան շնորհիւ. ով ամենակալ մեր Տէր Աստուածը, ողորմէ մեզի եւ փրկէ մեզ:

Քհնյ. - Ով Քրիստոս՝ մեր Աստուածը, պահպանէ քու ժողովուրդդ սուրբ եւ պատուական Խաչիդ հովանիին ներքեւ խաղաղութեան մէջ: Փրկէ երեւելի եւ աներևոյթ թշնամիէն, արժանի ըրէ զիրենք գոհութեամբ փառաւորելու Քեզ քու Հօրդ եւ սուրբ Հոգիիդ հետ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քհնյ. - Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպիրք. - Կ'երգեն «Հայր մեր»ը:

Քհնյ. - Ձի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

ՏԵԱՌԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԻՆ՝

ՄՈՄԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Սրկ. - Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք, ընկալ կեցո՝ եւ ողորմեա:

Քհնյ. - Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(Քահանան խումկ կը դնէ բարվառիմ մէջ, եւ դպիրները կ'երգեն հետեւեալ)

ՇԱՐԱԿԱՆ ԱՁ

Մարմնացեալդ ի կուսէն նախայաւիտեան Բանդ, այսօր ի Տաճարն եկիր կատարել գօրէնս վասըն փրկութեան հեթանոսաց: Որ յամարուեստ աթոռ նըստիս բարեբանեալդ ի հրեշտակաց, այսօր ի Սիմէովնի բառնալով ի գիրկս, որ ընծայեսցես ըզմեզ ի կեանսըդ յաւիտենից: Փառք Հօր...: Այժմ եւ միշտ...:

Որ արձակիչդ ես կապելոց պարգեւատու ամենեցուն, այսօր հայցմամբ ծերունւոյն արձակեա եւ զիս ըզբազմամեղս ի կապանաց մահու ի կեանսըդ յաւիտենից:

Սրկ. - Թող ամենակալ Տէր Աստուած լսէ մեր աղաչանքները, մեզ ապրեցնէ ու մեզի ողորմի:

Քհնյ. - Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ա Ղ Օ Թ Ք

Ով Քրիստոս, դուն ես ճշմարիտ լոյսը, որ քու երկնաւոր լոյսի Հօրմէդ ծագելով՝ լուսաւորեցիր քու արարածներդ: † Օրհնէ Տէր այս մոմերը հոգեւոր օրհնութեամբ, որպէս զի խորհրդանշական այս երեւելի լոյսով լուսաւորուած՝ քու սուրբ Հոգիիդ շնորհքն-